

**Լիբանանահայ Գիրքը 1894-2012 Մատենագիտական Ցանկ,
աշխատասիրեցին՝ Անդրանիկ Տազեսեան եւ Արմէն
Իւրնէշլեան, Պէյրութ, Հայկազեան Համալսարանի
Հրատարակչատուն, 2013, 440 էջ:**

Յօրելենական տարիներու մնայուն ու թերեւս ամենէն հոգեպարար բարիքներէն մէկը գիրքը կը մնայ, մանաւանդ երբ խօսքը կը վերաբերի գրական յոբելեանի մը: 2012ի հայ տպագրութեան 500ամեակին առիթով կամ անոր որպէս հետեւանք, ամենէն գնահատելի երեւոյթներէն մէկն էր սփիւռքեան տարբեր համայնքներու գիրքերու ցանկագրումը, որ կարելորդ էր ունի՝ հայ գիրքի լիակատար մատենագիտութեան պատրաստութեան ճանապարհին: Մեր իմացութեան սահմաններուն մէջ, լոյս տեսած են սփիւռքեան անցեալ կամ ներկայ չորս կարելորդ համայնքներու՝ Միացեալ Նահանգներու, Պարսկաստանի, Եգիպտոսի եւ Լիբանանի ցուցակները, ինչ որ կարելորդ նպաստ մըն է այդ համայնքներու եւ, անոնց ընդմէջէն, սփիւռքեան մշակոյթի ուսումնասիրութեան համար:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի խմբագրութեան անդամներ Անդրանիկ Տազեսեանի եւ Արմէն Իւրնէշլեանի կողմէ կազմուած լիբանանահայ մատենագիտութիւնը ողջունելի աշխատանք մըն է բազմաթիւ առումներով: Ինչպէս կը յայտնեն աշխատասիրողները իրենց համառօտ յառաջաբանին մէջ, ան ատաղձ մը կը կազմէ բազմաթիւ ճիւղերու հետազօտութեան համար, նկատի ունենալով Պէյրութի կարելորդութիւնը որպէս սփիւռքեան հրատարակչական կեդրոն, մասնաւորապէս 1950-1975 ժամանակաշրջանին, բայց նաեւ այնուհետեւ: Պէյրութի անձնական ու Անթիլիասի Կաթողիկոսութեան տպարանները եւ անոնց կողքին հաստատուած հրատարակչատուները Սփիւռքի տարբեր համայնքներէ հեղինակներու դիմումներուն ընդառաջած են: Անոնց տպագրութիւններէն շատերը երկկենցաղ բնոյթ ստացած են, քանի որ լոյս տեսած են հեղինակի ապրած քաղաքի (օրինակ՝ Նիւ Եորք կամ Փարիզ) հրատարակութեան վայրով, բայց այլապէս անոնք ամբողջութեամբ կը վերաբերին լիբանանահայ հրատարակչական ճիւղին:

Հեղինակները օգտագործած են հինգ կարելորդ գրադարաններ (Հայկազեան Համալսարան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Զմմառու Վանք, Սէն Ժոզէֆ Համալսարան եւ Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարան), ինչ որ յայտնապէս դիւրացուցած է անոնց աշխատանքը (որ, կոռահելով յառաջաբանի տուեալներէն, 2012-2013ին կատարուած է), քանի որ այդ վայրերը լիբանանահայ համայնքի տպագրական արտադրութեան մէկտեղումի եւ ցուցակագրումի հիմնական օճախները կը նկատուին: Լիբանանահայ համայնքը

բախտաւոր եղած է նաեւ, որ իր տպարաններէն ու հրատարակչատուններէն գէթ մէկ քանին պարբերաբար լոյս ընծայած են գրացուցակներ, որոնք, նոյնիսկ ոչ-ամբողջական կամ ոչ-հետեւողական ըլլալով հանդերձ, կարելոր ուղեցոյց մը կ'ընծայեն:

Կազմողները կը յայտնեն, թէ Հայկազեան Համալսարանի ցուցակի նախնական հիմքին վրայ, անոնք դիմած են միւս գրադարաններուն քարտարաններուն, այնուհետեւ կատարելով լրացումներ եւ ճշդումներ: Անոնց մատնանշած հիմնական դժուարութիւններէն մէկը, որ հասարակաց է սփիւռքահայ գիրքին ամէնուրեք¹, բուն հատորներուն ընծայած տուեալներուն անբաւարարութիւնն է: Փորձառութեամբ գիտենք, որ երբեմն թուական կը պակսի, երբեմն՝ տպարան կամ տպագրութեան վայր, երբեմն այդ տուեալներէն մէկը կամ հեղինակին թէ կազմողին անունը թաղուած են վերջին էջին կամ յառաջաբանին մէջ, ինչ որ ի հարկէ մատենագէտը զանազան դժուարութիւններու կը մատնէ:

Ուրիշ կարելոր դժուարութիւններ եղած են քարտերու միօրինակութեան պակասը եւ, յատկապէս, գիրքերը մէկ առ մէկ անձամբ ստուգելու անկարելիութիւնը (ստուգումը կատարուած է հակասութիւններու գոյութեան պարագային): Ըստ երեւոյթին, գիրքերու ստուգման այս ընտրովի ձեւին, գէթ մասամբ, պետք է վերագրել այն փաստական պակասներն ու թերութիւնը, որոնք պիտի մատնանշուին յետագայ էջերուն մէջ: Բնականաբար, քանի որ տպարանային գրացուցակներու գոյութիւնը առաւելութիւն մըն է, անոնց անկատար ըլլալը չարեաց փոքրագոյնը պետք է սեպել: Նոյնը կը վերաբերի դասագիրքերու շարքերուն, որոնք դպրոցական անմիջական սպառումի սահմանուած ըլլալով, հաւանաբար հրատարակիչները միայն պատահական կերպով զանոնք արժանի նկատած են մնայուն կայք ունենալու գրադարաններու մէջ:

Գիրքը կազմուած է որպէս այբբենական ցուցակ², ընդգրկելով իւրաքանչիւր միաւորի բաւական համապարփակ նկարագրութիւն մը, ուր սովորական տարրերէն բացի, նաեւ նշուած է պատկերագրողուած կամ քարտիսաւոր ըլլալը: Նկատի ունենալով, որ Հայաստանի Ազգային Գրադարանի ծիրին մէջ 1960ականներէն ի վեր մշակուող եւ արդէն հինգ հատորներով 1512-1930 (լոյս տեսած) հայ գիրքի ցուցակը կը հրատարակուի ըստ տարեթիւի եւ ապա՝ ըստ այբբենական կարգի, թերեւս սփիւռքեան «շրջանային» մատենագիտութիւններ կազմողները կրնան ապագային մտածել այս սկզբունքը որդեգրելու մասին՝ «մայր» ցուցակը կազմող մատենագէտներուն գործը դիւրացնելու նպատակով:

Գիրքը բացայայտօրէն ընդգրկած չէ առանձնատիպերը: Սակայն, բացառութիւն մը կազմած է, անձանօթ պատճառներով, Արտաշէս Տէր Խաչատուրեանի *Մատենագիտութիւն Ռուբէն Զարդարեանի*, որ

արեւմտահայ արձակագրի 1977ի (վրիպակով տպուած է՝ 1997ի) հրատարակութեան կցուած մատենագիտութեան առանձնատիպն է (էջ 235):

Այբբենական ցուցակին մէջ, կը յայտնեն աշխատասիրողները, անոնք դիմած են հեղինակներու անունները միատարրութեան ենթարկելու՝ ուղղագրական թէ՛ այլ իմաստներով: Մինչ մէկ կողմէ ասիկա առաւելութիւն մըն է, միւս կողմէ որոշ դժուարութիւններ կրնայ յարուցանել ապագայ ուսումնասիրողին:

Այբբենական յաջորդականութիւնը կատարուած է համակարգչային ծրագրով մը, որուն առաքելութիւնը սակայն անթերի կերպով իրագործուած չէ. կարգ մը հեղինակներու պարագային, ներքին այբբենական կարգը խախտած է: Կը կարծենք, սակայն, որ աւելի նպատակայարմար կրնար ըլլալ ներքին ժամանակագրական կարգի որդեգրումը:

Ուրիշ դժուարութիւն մը կը հանդիսանայ, երբեմն, հեղինակի մը անունին տակ թէ՛ բուն անունով եւ թէ՛ գրչանունով հրատարակուած գործերուն մէկտեղումը: Երեք պարագաներ նկատելի են.

ա) Երբեմն նախ գրուած է հեղինակին անունը, ապա՝ գրչանունը, երբ բուն գիրքը լոյս տեսած է միայն գրչանունով: Օրինակ՝ Պօղոս Մնասպեանի անունին տակ նշուած է *Վերջին Արարը* գիրքը (էջ 361), որ հեղինակին բուն անունը չունի, այլ լոյս տեսած է Դրաստամատ Պիթացի գրչանունով:

բ) Երբեմն նոյն գիրքը կերելի թէ՛ բուն հեղինակին եւ թէ՛ գրչանունին տակ: Օրինակ՝ Միսաք Գոչունեանի *Կարասպետ* վէպին տարբեր հրատարակութիւններ (էջ 83 եւ 416):

բ) Երբեմն միայն տրուած է հեղինակին անունը, առանց գրչանունի: Սակայն, Կարօ Սասունի հրատարակած է *Լեռներու Խորհուրդը* պատմուածքներու հատորը իր գրական գրչանունով՝ Վիգէն Գլակ, որ կը բացակայի ցուցակէն (էջ 338): Անդրանիկ Օտուկեանի *Մոխրամանը* վէպին առաջին հրատարակութիւնը տեղի ունեցած է 1935ին՝ Վ. Խաժակ գրչանունով, ոչ թէ՛ բուն անունով (էջ 162) (գրչանունը գործածուած է 1933ին՝ *Եղեռնաբախտ Քերթողներ* գիրքին առիթով, թէ՛ վերջինին դիմաց յիշուած է բուն անունը եւ ապա գրչանունը) (էջ 161):

Կարգ մը հեղինակներու պարագային, գործերը բաժնուած են երկու անուններու միջեւ. օրինակ՝ Եղիա Քասունի եւ Վեր. Եղիա Քասունի (էջ 417 եւ 419), Ազնիւ Գարալէքեան եւ Ազնիւ Քարալէքեան-Միքայէլեան (էջ 75 եւ 419), Սմիթի Տոթք. Օսուրլտ եւ Օսուրլտ Ճ. Սմիթի (էջ 361 եւ 433), Անդրանիկ Կռանեան եւ Հ. Անդրանիկ Կռանեան (էջ 183 եւ 184):

Մատնանշելի են որոշ հարցեր բուն գիրքերու պարագային.

1) Քանի մը գիրքեր Պէրուօ տպուած չեն, որոնց շարքին՝ *Որո՞նք են Պատասխանատուները. Հայ Յեղ. Կուսակցութիւնները* (էջ 298)՝ Կ. Պոլիս, *Ազգերու Հայկական Ընկերակցութիւն* (էջ 202, «Ազգերու» բառը անելուցուած է մեր կողմէ)՝ Փարիզ, Գարեգին Արք. Խաչատուրեանի *Հովուական Թուղթ Առ Պրագիլահայս* (էջ 155)՝ Սան Փալօ, Գրիգոր Պըլտեանի *Անունը Լեզուիս Տակ* (էջ 327)՝ վայրի նշում չունի, Յարութիւն Քիրքճեանի *Փորձ Տարագրութեան Մասին* (էջ 425)՝ Փարիզ: Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի *Երկերու* մատենաշարէն (էջ 265) որեւէ հաստոր Պէրուօի մէջ տպուած չէ:

2) Չորս գիրքեր, որոնց մասին յաւելեալ ծանօթութիւններ կ'ակնկալուին, առնչութիւն չունին Լիբանանի հետ.

ա) Տոքթ. Յ. Արշարունիի կողմէ թարգմանուած *Մնունդ Եւ Տաճումն Մանկան* հատորիկը (էջ 363) տպուած է Նիւ Եորք, 1924ին, Հայ Կրթական Հիմնարկութեան կողմէ:

բ) Ռ. Գագանճեանի (ֆրանսահայ բանաստեղծ Զուլալ Գագանճեան) *Կեանքը Քոյրս* հատորը (էջ 69) տպուած է Փարիզ:

գ) Յակոբ Գույումճեանի *Երեսնեան Երգեր* բանաստեղծութիւններու հատորը լոյս տեսած է Ֆիլատելֆիա, 1957ին, 142 էջ: Դժուար կը նկատենք, որ տպուած ըլլայ Պէրուօ, 1959ին, նոյն էջաքանակով (էջ 84), եւ, օրինակ, հայաստանեան գրադարանները հասած չըլլայ:

դ) Յարութիւն Թանչուտեանի *Քէօթէնճէի Ժողով Եւ Քսան Կախաղաններ*, ըստ Հայաստանի Ազգային Գրադարանի ցուցակին, տպուած է Սելմա (Քալիֆորնիա) եւ տպարանի նշում չունի:

Այս խումբին հետ պէտք է կապել Վեր. Ճէյմզ Գառնուգեանի *Վերադարձ Դէպի Այրարատեան Լեռնաշխարհ* գիրքը (էջ 73): Արդարեւ, հատորին մէջ գրուած է layout (էջադրութիւն) Sevan Printing House եւ printed (տպուած) in Switzerland, առանց քաղաքի թէ տպարանի նշումի: Հազիւ թէ Պէրուօ էջադրուած գիրքը լիբանանահայ տպագրութիւն կարելի ըլլայ սեպել:

3) Նշմարելի են շարք մը «ուրուական» գիրքեր.

ա) Նիկողոս Սարաֆեանի *Վէնսէնի Անտառը*, Պէրուօ, 1981, 569 էջ, որուն մասին տպարանային տուեալներ չկան³: Նման հաստափոր հատորի մը յիշատակութիւնը բացակայ է 1982ին լոյս տեսած Սարաֆեանի *Չափածոյ Երկերէն*, որ հասած էր յիշելու նոյնիսկ Սարաֆեանի գործերու ընդգրկումը Վ. Գաբրիէլեանի կազմած *Սփիւռքահայ Բանաստեղծութիւն* ժողովածուին մէջ (Երեւան, 1981), ինչպէս եւ Ալեքսանդր Թոփչեանի կազմած *Վէնսէնի Անտառը* ժողովածուէն (Երեւան, 1988):

բ) Հրաչ Զարդարեանի *Մեր Կեանքը*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան, 1958, 304 էջ (էջ 109): Այս ենթադրեալ

հրատարակությունը որեւէ տեղ յիշուած չէ եւ էջաքանակը ճշդիւ կը համընկնի Փարիզի 1934ի հրատարակութեան, որ ցարդ միակ յայտնի սփիւռքեան հրատարակութիւնն է: Ըստ Պետրոս Արդ. Մանուէլեանի ցուցակին, 1958ին Անթիլիաս հրատարակուած է *Մեր Կեանքը* անունով զիրք մը՝ առանց հեղինակի⁴:

գ) Կոստան Զարեանի *Օրերի Պսակը*, Պէյրութ, Տպ. Համազգային, 1972, 172 էջ (էջ 110): Այլուր չիշուած այս հրատարակութիւնը մէկ էջով եւ մէկ տարուան տարբերութեամբ կը զանազանուի «Բեմ» Հրատարակչատան պէյրութեան հրատարակութենէն (1971, 173 էջ), որ տպարանի յիշատակում չունի եւ որուն տառատեսակին կը հանդիպինք «Համազգային»ի Վահէ Մէթեան Տպարանի այդ ժամանակի հրատարակութիւններուն մէջ, ինչ որ կրնայ ստեղծած ըլլալ այս թիրիմացութիւնը: Մեզի տարօրինակ կը թուի, որ կէս դար վերահրատարակուած չըլլալէ ետք, յանկարծ Զարեանի բանաստեղծութիւններու այս հատորը երկու իրերայաջորդ հրատարակութիւններու արժանացած ըլլալ նոյն քաղաքին մէջ:

դ) Կոստան Զարեանի *Անցորդը Եւ Իր Ճամբան*, Հրտ. ԳՄԳՄ թիւ 11, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան, 1974, 646 էջ (էջ 109): Այս հրատարակութիւնը էջաքանակով նոյնական է Զարեանի *Երկերուն* հետ (էջ 110), որ լոյս տեսած է 1975ին որպէս Գեորգ Մելիտինեցի Գրական Մրցանակի թիւ 10, ընդգրկելով երեք երկեր («Անցորդը Եւ Իր Ճամբան», «Արեւմտուք» եւ «Քաղաքներ»), իսկ գրական մրցանակին թիւ 11 հրատարակութիւնը Արմանտի *Շքեղ Մերկութեամբ* բանաստեղծական հատորն է (1974)⁵:

ե) Յաւելեալ ծանօթութեան կարիք ունեցող այլ զիրք մը, ի վերջոյ, կրկնութիւն մըն է: Խ. Պ. Քարտաշեանի *Խորհրդային Հայաստանի Նոր Ուղղագրութիւնը (Քննադատական Փորձ). Հայերէնի Բարեփոխման Կէտեր* (Պէյրութ, Հրագրան, 1926, 30 էջ) պէտք է նոյնացնել պակասաւոր տեղեկութիւններ ունեցող եւ վրիպակով Խ. Պ. Արտաշեանի անունին տակ դրուած հատորին հետ (էջ 58):

Գրաշարական վրիպումի հետեւանք է Վահան Տէրեանի 1985ի *Հատընտիքին* ենթադրեալ հրատարակութիւնը *Համազգային Օրացոյցին* հետ (էջ 395): Խօսքը ցուցակի յաջորդ զիրքին՝ Տէրեանի *Մթնշաղի Անուրջներու* 1939ի հրատարակութեան կը վերաբերի:

Նոյնպիսի գրաշարական վրէպ մը նկատելի է հետեւեալ յղումին մէջ.

Թէոդիկ, *Գողգոթա Թրքահայ Հոգեւորականութեան Եւ Իր Հօտին Աղէտալի 1915 Տարին (Նոր Ղեւոնդեանք)*, 2. Վան, Առաջին Հտր., Ա. Մաս, մատենաշար Ապրիլեան Եղեռն թիւ 11, 12, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան, 1966, 36 էջ (էջ 125): Խօսքը Թէոդիկի ամբողջական ձեռագրէն՝ Ներսէս Եպս. Բախտիկեանի կողմէ քաղուածաբար

հրատարակուած երկու տետրակներուն մասին է, որոնք ատենին Շահան Շահնուրին առիթը տուած էին գրելու «Ձոյգ Սը Կարմիր Տետրակներ» յուզիչ յուշագրութիւնը Թէոդիկի մասին: Բայց հոս տեղեկութիւնները իրար խառնուած են (թիւ 11՝ Ա. հատոր, Ա. մաս, 48 էջ, թիւ 12՝ Ա. հատոր Բ. մաս, 36 էջ):

Այլ բնոյթի ուղղումներ.

ա) *Նարեկ Աղօթամատեան Ս. Գրիգոր Նարեկացւոյ*. Թորգոմ Եպս. Գուշակեանի աշխարհաբար վերածումի 1970ի հրատարակութիւնը զայն կը նշէ որպէս հեղինակ (էջ 85), իսկ 1999ի հրատարակութիւնը՝ որպէս աշխարհաբարի վերածող (էջ 273)

բ) *Անդրանիկի Կեանքը, Պատերազմները Եւ Յուշերը* հատորը, որ մաս կազմած է «Ազդակ» մատենաշարին, հեղինակ չունի եւ կարելի չէ վերագրել Արսէն Սարմարեանին (էջ 240)՝ Վահան Թոթովենցի եւ Լեւոն Թիթինճեանի կեղծանունը: Վերջիններուն 1920ին հրատարակած գիրքը կը կոչուի *Զօր. Անդրանիկը Եւ Իր Պատերազմները* եւ, իր քննադատական բնոյթին պատճառով, դժուար թէ «Ազդակ»ի մատենաշարին մաս կազմէր:

Անուններու⁶, ինքնութիւններու⁷, խորագրերու⁸, թուականներու⁹, տպագրութիւններու¹⁰, կազմողներու¹¹, վայրի¹², հրատարակիչներու¹³, թարգմանիչներու¹⁴, խմբագիրներու¹⁵ եւ էջաթիւերու¹⁶ կարգ մը ուղղումներ եւ յաւելումներ կարելի է ընել տուեալներուն մէջ:

Մեր կարելիութեան սահմաններուն մէջ, կառաջադրենք կարգ մը յաւելումներ եւ լրացումներ՝ մասամբ մեր տեսած եւ մասամբ զանազան աղբիւրներէ եւ ցուցակներէ քաղուած հատորներով:

Յաւելումներ

Ա.Ս., *Եկեղեցականի Սը Կեանքի Հանգրուանները. Պատմութեան Համար*, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան եւ որդիք, 1968, 272 էջ:

Ալթունեան, Ա., *Աղքատին Պատիւը (Իրական Վէպ Պոլսահայ Կեանքէ)*, մատենաշար Ազդակ թիւ 45, Պէյրութ, Տպ. Ազդակ, 1939, 381 էջ:

Ալթունեան, Սարգիս, *Հայ Դիմադրականի Սը Յուշատետրէն Փրցուած Էջեր*, Պէյրութ, Տպ. Արագ, 1986, 95 էջ:

Ալիքսիանոս Կամ Ազիզի Դարիպ Հիթեայէսի, Պէյրութ, Տպ. Յ. Տէր Յովհաննէսեան, 1926, 31 էջ:

Ակիւլեան, Վեր. Պետրոս Ս., *Ահա Ամպերով Կու գայ*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1962, 124 էջ:

Ահա Ըլ Աթիգ Վէ Ահա Ըլ Ճէտիտ, Պէյրութ, Տպ. Ամերիկեան, 1926, 1056 + 13 + 308 էջ:

Աղազարեան, Միհրան, *Որումին Պտուղը*, [Պէյրութ], «Հորիզոն»ի թերթօնը, Տպ. Լիբանան, 1938, 68 էջ:

Աղպաշեան, Յովհաննէս, *Լիբանանի Թեմի Ազգային Գործերու Բարոյութան Համար*, Պէյրութ, հրատ. «Ժողովուրդի Չայն»ի, 1945, 18 էջ:

Աղպաշեան, Յովհաննէս, *Հայկական Հարցը Երէկ Եւ Այսօր*, Պէյրութ, հրատ. «Ժողովուրդի Չայն»ի, 1945, 20 էջ:

Աղպաշեան, Յովհաննէս, *Արարական Ազգային Ազատագրական Չարթօնքը (Համառօտ Նօթեր)*, «Յառաջ» շաբաթաթերթի մատենաշար թիւ 1, Պէյրութ, Տպ. Ատլաս, 1959, 111 էջ:

Աղպաշեան, Յովհաննէս, *Սովետական Հայաստան*, Պէյրութ, ա.տ., ա.թ., 20 էջ:

Աղպաշեան, Յովհաննէս, *Կոմունիզմ Եւ Ազգայնականութիւն*, Պէյրութ, հրատ. «Ժողովուրդի Չայն»ի, ա.թ., 17 էջ:

Աղօթագիրք Դրախտի Դուռ, Հաւաքածոյ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Աղօթից [հայերէն եւ թրքերէն], հրատ. Հայ Լուսչ. Եկեղեցասիրաց Եղբայրութիւն, Գ. տիպ, Պէյրութ, Տպ. Ազատ Ս. Տէր Յովհաննիսեանի, Հ. Ուզունեանի, 1929, 638 էջ:

Աղօթքներ, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան, 1979, 30 էջ:

Ալլահվերտեան, Հայկ, *Շիրակօ Եւ ... Ինքնութիւն. Սփիւռքահայ Մարդու Մտորումներ*, իմբ. եւ թրգմ. Թորոս Թորանեան, Պէյրութ, «Հայ Տիպ Քոմիւնիկրաֆ Թեքնոլիթես», 1986, 173 էջ:

Աջապահեան, Կ. Ս., *Գոհարիկ*, Պէյրութ, Տպ. Հրագրան, 1925, 16 էջ:

Առժամեայ Գրացուցակ Կ. Տօնիկեան Գրատան, Պէյրութ, Տպ. Տէր Յովհաննէսեան, 1928, 22 էջ:

Արփիարեան, Արփիար, *Ոսկի Ապրջան*, մատենաշար Գառնի թիւ 8, Պէյրութ, Տպ. Համազգայինի, 2011, 109 էջ:

Աւետիս Ահարոնեան. Համառօտ Նօթեր Իր Կեանքի Եւ Գործի Մասին, Պէյրութ, Տպ. Ազդակ, 1930, 8 էջ:

Բրիօլէ, Մարսէլ, *Երկու Սրտեր (Սիրային Խիստ Հետաքրքրաշարժ Եւ Բարոյակից Վէպ)*, մատենաշար Ազդակ թիւ 8, [Պէյրութ], ա.տ., ա.թ., 256 էջ:

Գասպարեան, Շահէ Արք., *Վերջին Նամակը (Գրած 6 Նոյեմբ. 1935-ին Երևան)*, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան, 1936, 15 էջ:

Գարաճեան, Երուանդ, *Ճարտար Կիկոսիկը*, մատենաշար Պատանեկան Բեմ թիւ 1, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան, 1958, 15 էջ:

Սարգիսեան, Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոս, *Սրբութեան Յօղը Լիբանանեան Հողին Վրայ*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան, 1977, 23 էջ:

Գոլդման, Օ., *Յարձակում Ազոաւ Անտառին Մէջ*, թարգմ. Մ. Միսակ, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան, 1957, 85 էջ:

Գոլդման, Օ., *Գիշերուան Աչքը*, թարգմ. Մ. Միսակ, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան, 1957, 78 էջ:

Գույումճեան, Մեսրոպ Կ. *Գրպանի Նոր Բառարան Հայերէն-Անգլիերէն*, Պէյրութ, Տպ. Շիրակ, 1973, 352 էջ:

Գույումճեան, Մեսրոպ Կ. *Գրպանի Նոր Բառարան Հայերէն-Անգլիերէն*, Պէյրութ, Տպ. Շիրակ, 1996, 352 էջ:

Գույումճեան, Շաւարշ Եպս., *Բաց Նամակ*, հրատ. Կիլիկիոյ Աթոռի Պաշտպանութեան Յանձնախումբ, Պէյրութ, ա. տ., 1958, 63 էջ:

Գուսան Երգարան, կազմ. Մինաս Գանգրունի, Բ. տիպ., Պէյրութ, Տպ. Տոնիկեան, 1970, 167 էջ, պակգ.:

Գրական Գոհարներ, Պէյրութ, Տպ. Ազդակ, 1927, 44 էջ:

Գրատուն Եւ Թղթավաճառատուն Վահան Յ. Ուզունեան Պէյրութ. Հիմնեալ 1921, Պէյրութ, Տպ. Տէր Յովհաննէսեան, Յ. Ուզունեան, 1928, 56 էջ:

Գրատուն Վահան Յ. Ուզունեան, Պէյրութ, Տպ. Հայ-Կեանք, 1925, 42 էջ:

Գրացանկ Կիրակոս Տոնիկեան Գրատան, Պէյրութ, Տպ. Էւ կազմատուն Տէր Յովհաննէսեան, 1926, 11 + 7 էջ:

Գրացանկ Հայպետհրատի Գիրքերու 1956-ի, Պէյրութ, Տպ. Կ. Տոնիկեան, 1956, 16 էջ:

Եկեղեցին, Պէյրութ, Տպ. Կ. Տոնիկեան, 1932, 18 էջ:

Զրուցատրութիւն Հայերէն-Անգլիերէն (Պարզ Եւ Դիւրուսոյց Եղանակ), Դ. տպագրութիւն ճոխացած Էւ վերամշակուած, Պէյրութ, Կ. Տոնիկեան Էւ որդիք, 2004, 256 էջ:

Էլճանեան, Ա. Էւ Պապոյեան Գ., *Մայրերու Եւ Երեխաներու Պետական Պաշտպանութիւնը Խորհրդային Հայաստանի Մէջ*, Պէյրութ, Կ. Տոնիկեան, 1946, 34 էջ:

Ընդարձակ Գրացուցակ 1930-1931 (Գրատուն Եւ Հրատարակչատուն Կ. Տոնիկեան, Պէյրութ, Տպ. Կ. Տոնիկեանի, 1930-1931, 48 էջ:

Ընդարձակ Գրացուցակ Ուզունեան Վահան Գրատան Եւ Թղթավաճառատան, Պէյրութ, Տպ. Կ. Տոնիկեան, 1938, 95 էջ:

Ընդարձակ Յուցակ Կ. Տոնիկեան Գրատան 1956, Պէյրութ, [Տպ. Կ. Տոնիկեան], 1956, 128 էջ:

Թուղթ Հովուական Տեառն Պողոսի Պետրոսի ԺԳ-ի Թերզեան Պատրիարքի Տանն Կիլիկիոյ, Պէյրութ, ա.տ., 1929, 11 էջ:

Իւվեգեան, Յակոբ, *Տարերք Չայնագրութեան*, Պէյրութ, [ա.տ.], 1924, 29 + 1 + 24 էջ:

Խաչիկեան, Վ. Ս., *Ժան ՏԱրք*, Պէյրութ, Տպ. Հրագրան, 1925, 16 էջ:

Խտացեալ Արձանագրութիւն Սոց. Դեմ. Հնչ. Կուսակցութեան Լիբանանի Շրջանի 7-րդ Պատգամաւորական Ժողովի (Գումարուած՝ 1938 Յունիս 18-19 Էւ 20-ին), Պէյրութ, տպ. Կ. Տոնիկեան, 1938, 9 էջ:

Ծրագիր Կանոնագիր Դպրոցատէր Տիկնանց Միութեան Ի Զահլէ, Պէյրութ, Տպ. Կ. Տոնիկեան, 1932, [4 էջ]

Ծրագիր-Կանոնագիր Հայ Ուսուցչական Միության Լիբանանի 1930, Պէրուֆ, Տպ. Հրագրան, 1930, 14 էջ:

Կամ Հանդէս Վերլուծական, թիւ 1, Փարիզ-Պէրուֆ, Տպ. Ատլաս, Սեպտեմբեր 1980, 289 էջ:

Մուտի, Մելլորէտ Օ., *Կիրակնօրեայ Դասերու Տարրական Դասընթացք 7-10 Տարեկան Տղոց Համար Իբրեւ Ուղեցոյց Ուսուցիչներուն*, հայացուց Արաքսի Յ. Պօտուրեան, Պէրուֆ, ա. տ., 1927, 180 էջ, պատկերգ.:

Կոչ Բարեսէր Հայութեան (Մշակոյթի Օրուան Առթիւ), Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Պէրուֆ, Տպ. Կ. Տօնիկեան, 1934, 15 էջ

Կոչ Մը Մեղաւորին, «Աւետարանի Փող»-ի հրատարակութիւն, թիւ 1, Պէրուֆ, Տպ. Տէր Յովհաննիսեանի, 1928, 12 էջ:

Համագումար Եւ Խորհրդակցական Ժողով Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու, 31 Օգոստոս-6 Սեպտեմբեր 1986, Այնճար – Լիբանան, [Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան, 1986], 39 էջ:

Հայերէն Քերականութիւն, հրատ. Սահակեան Լիսէի, Պէրուֆ, Տպ. Տօնիկեան, 1966, 36 էջ:

Հոգեշահ Ընթերցումներ Եւ Կանոնագիր Եկեղեցասէր Կանանց Միութեան ի Պէրուֆ, Պէրուֆ, Տպ. Հրագրան, 1925, 16 էջ:

Հոճա Նասրէտտինի Զուարճալիքները, Դ. տիպ, Պէրուֆ, Տպ. Կ. Տօնիկեան եւ որդիք, [1978], 218 էջ:

Զայնագրեալ Նոր Երգարան Միաձայն Եւ Երկձայն, Մաս Գ. Զուարթ Երգեր. հայկական օբլերթօններէ ձայնագրեց եւ կազմեց Յակոբ Իւվէզեան, Պէրուֆ, Hagop Uverian, 1926, 16 էջ:

Զայնագրեալ Նոր Երգարան, Մաս Դ. Դաշնակի Եւ Երգչախումբի Համար, աշխատասիրեց Յ. Իւվէզեան, Պէրուֆ, Hagop Uverian, 1928, 24 + 2 էջ:

Մարգարեան, Վեր. Յովհաննէս, *Աստուծոյ Փրկութեան Ծրագիրը*, Պէրուֆ, Տպ. Տօնիկեան, 1971, 703 էջ:

Մէքոսնըլտ, Ու., *Հոգիներ Վաստկիլ*, թարգմ. Պ. Պ. Աճեմեան, Պէրուֆ, Տպ. Տօնիկեան, 1960, 69 էջ:

Մուսա-Լերան 18 Նահատակները, հրատ. Մուսա-Լերան Ուսումնասիրաց Միութեան, Պէրուֆ, Տպ. Նարեկ, [1955], 32 էջ:

Յարութիւնեան, Սարգիս, *Նուարդ Յարութիւնեան. Վշտակիր Մայրը Յաւիտեան Տէրոջը Հետ*, Պէրուֆ, Տպ. Տօնիկեան, 1966, 19 էջ:

Յարութիւնեան, Սարգիս, *Հայ Առասպելաբանութիւն*, Պէրուֆ, Տպ. Համազգային, [2000], 527 էջ:

Յիշատակի Երեկոյ Նուիրուած Պետիկ Հերկելեանի, հրատ. «Ազդակ» օրաթերթի, Պէրուֆ, ա. տ., 2010, 16 էջ:

Յիշատակի Հանդիսություն Երան. Տ.Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսի. Վախճանման Քսանհինգամեակ (1963-1988), Ուրբաթ, 19 Փետրուար 1988, Պիքֆայա, ա.տ., [12 էջ]:

Յովհաննէսեան, Ա., *Թուաբանություն. Խնդիրներ Եւ Օրինակներ Նախակրթարաններու Առաջին Կարգին Համար*, Ա. Տարի, Պէյրուֆ, Տպ. Վահագն, 1934, 83 էջ:

Նաճարեան, Ս., *Վարպետ Բժիշկը (Ծիծաղաշարժ Կատակերգություն Մէկ Արար)*, Պէյրուֆ, Տպ. Տէր Յովհաննէսեան, 1926, 13 էջ:

Նոր Կտակարան Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի, յունական բնագրէն թարգմանուած, Պէյրուֆ, Տպ. Ամերիկեան, 1927, 662 էջ:

Նոր Մարաշի Ա. Քառասուն Մանկանց Եկեղեցւոյ Եւ Վարժարանի Ծիւղութեան Յանձնախումբ, Վաւերացուած Ազգային Առաջնորդարանի Եւ Վարչութեան Համար 263 / 1 Եւ 27 Մայիս 1930 Պաշտօնագրով, Պէյրուֆ, Տպ. Ազատ, 1930, [6 էջ]:

Շանթ, Լեւոն, *Մանկական Աշխարհ. Այբբենարան*, Պէյրուֆ, Տպ. Հայ Ճեմարանի, 1947, 112 էջ:

Շանթ, Լեւոն, *Մանկական Աշխարհ, Ընթերցարան Հայերէն Լեզուի, Գ. Տարի Ութէն Բնր Տարեկաններու Համար*, հրատ. Համազգային, Պէյրուֆ, Տպ. Համազգային, 1973, 128 էջ:

Պապեան, Մացակ, *Պայքարի Ու Յաղթանակի 18-րդ Տարեդարձը*, հրատ. «Ժողովուրդի Չայն», Պէյրուֆ, Տպ. Կ. Տօնիկեան, 1939, 48 էջ:

Պատկերազարդ Կիլիկեան Տարեցոյց 1934, Բ. տիպ, պատր. Կ. Կիլիկեցի, Պէյրուֆ, Տպ. Կ. Տօնիկեան, [1934], [125 էջ], պատկզ.:

Պարութեան, Յարութին, *Յուշեր Թումարգայի Անցեալէն*, Պէյրուֆ, Տպ. Տօնիկեան, 1960, 230 + 24 էջ:

Չիլինկիրեան, Եղիշէ Եպս., *Յուշք Եւ Պատճէնք Պաշտօնաւոր Եւ Անպաշտօն Վիճակաւ Զանազան Անձանց Գրուած Պաշտօնագրերու Եւ Նամակներու, Բ. Հտր.*, Պէյրուֆ, հրատ. Վ. Ուզունեան Գրատուն թիւ 7, Պէյրուֆ, Տպ. Ազատ Յ. Տէր-Յովհաննէսեանի եւ Յ. Ուզունեանի, 1929, 195 էջ:

Պաշտօնական Ամուսնալուծութիւնք Եւ Վերամուսնութիւնք, Պէյրուֆ, Տպ. Ս. Թաշճեան, 1925, 92 էջ:

Պասմաճեան, Բէնիամին եւ Յարութին Դանիէլեան, *Դասընթացք Դերձակութեան Միաւոր Գործողութեան Հիման Վրայ Պատրաստուած Նիյր Իսթ Ըրլիֆի Անդիլիաս Արհեստանոց Որբանոցին մէջ*, Պէյրուֆ, Տպ. Տէր Յովհաննէսեան, 1927, 57 էջ:

Պոյաճեան, Յովհաննէս, *Հոգեւոր Արթնություն Եզիպտոսի Մէջ*, Պէյրուֆ, Տպ. Տօնիկեան, 1961, 59 էջ:

Մարմազեան, Վեր. Յովհաննէս, *Փոթորիկ Եւ Փրկութիւն. Մուսա Լեւան Հերոսամարտը (Թատրերգութիւն 5 Արար)*, Պէյրութ, Kardashian Printings Press, 1990, 78 էջ:

Մերովբեան, Ս. Յ., *Չայն Սը Ամերիկեան Աստուածաշունչի Ընկերութեան*, Պէյրութ, Տպ. Հրագոյան, 1927, 6 էջ:

Մեւ-Ոստ, *Լեւան Ոգին (Վեպ Ազգային-Յեղափոխական Կեանքէ)*, մատենաշար Կայծ թիւ 36, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան, 1951, 216 էջ:

Սիմոնեան, Սիմոն, *Հայոց Պատմութիւն, Ա. Տարի Հին Շրջան*, Ե. Տիպ, Պէյրութ, Տպ. Մեւան, 1956, 112 էջ:

Սիսլեան, Վեր. Գ., *Յոբ (Ողբերգութիւն 3 Արար)*, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան եւ որդիք, 1969, 70 էջ:

Սպըրճըն, Չարլզ, *Յիսուսի Վերքերովը Բժշկութիւն*, թարգմ. Պ. Բ. Քարծայր, Պէյրութ, Տպ. Ս. Թաշճեան, 1925, 19 էջ:

Ս. Յարութեան Եկեղեցի. Հիմնօրհնէք, Օծում, Անդրանիկ Պատարագ, Պէյրութ, Տպ. Անահիտ, 1934, 16 էջ, պատկերգ.:

Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, *Հայրական Խօսք Առ Ժողովուրդն Հայոց*, Էջմիածին - Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսարանի, 1992, 23 էջ:

Վարդենի, *Նորասպակ Լոյսեր*, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան եւ որդիք, 1979, 94 էջ:

Տօնապետեան, Վ. Խ., *Վշտի Յոլքեր (Աշակերտական հաւաքածոյ)*, Պէյրութ, Տ. Հրագոյան, 1925, 43 էջ:

Ըիվօլէ, Ժորժ, *Վերադարձը (Թատրերգութիւն Մէկ Արարով)* [եւ] Քուրթէլին, Ժ., *Ապահովագրեալ Նամակ Սը*, թրգմ. Վարդան Գեորգեան, «Չահակիր» գրական ընկերակցութիւն թիւ 3, Պէյրութ, Տպ. Հրագոյան, 1925, 30 էջ:

Քերականութիւն, Ե. դասարան, հրատ. Հայ Ազգ. Սահակեան Լիսէի, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1966, 39 էջ:

Քիւրքճեան, Յարութիւն, *Հայրենի Աղբիւր 3. Ձեռնարկ Լեզուի Եւ Բացատրեալ Ընթերցանութեան*, միջնակարգ-երկրորդական բաժին, Գ. տարի, Բ. Տիպ, Պէյրութ, Տպ. Համազգային, 1999, 159 էջ:

Քօթօնայի, Լ., *Գահ Եւ Սէր*, թարգմ. Հ. Մ. Պօտուրեան, Պէյրութ, Տպ. Կ. Տօնիկեան, 1937, 726 էջ:

Քօթօնայի, Լ., *Գահ Եւ Սէր Կամ Կատարինէ Չարուհին*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1960, 549 էջ:

Լրացումներ

Ամիրալեան, Մէլրի, *Թռիչք Օդիս Իշխանութենէն Դէպի Երկնային Բարձունքներ*, ա.տ., ա.հ., 1959, 128 + 32 էջ, պատկերագարդ:

Այվազեան, Խորեն, *Թնդանօթի Միսեր... (Զինուորի Մը Յուշատեսերէն)*, Պէյրուֆ, Կ. Տօնիկեան, 1959, 145 էջ:

Արարատ Գրպանի Երգարան, Ա. Հտր., Բ. Տիպ, հրատ. Կ. Տօնիկեան գրատան թիւ 10, Պէյրուֆ, Տպ. Տէր Յովհաննէսեանի, 1927, 303 էջ:

Արարատ Գրպանի Երգարան, Բ. Հտր., հրատ. Կ. Տօնիկեան գրատան թիւ 9, Պէյրուֆ, Տպ. Տէր Յովհաննէսեան, 1927, XIV + 279 էջ:

Աւելի Կեանք, պարբերագիրք հոգեւոր եղբայրութեան երիտասարդաց, Պէյրուֆ, Տպ. Շիրակ, 1959, 50 էջ, պատկերազարդ:

Զօհրապեան, Կիրեղ Յովհաննէս Եպս., *Թուղթ Հովուական. Մեծ Պահք 1948*, Պէյրուֆ, Հայ Կաթողիկէ Տպարան, 1948, 22 էջ:

Զօհրապեան, Կիրեղ Յովհաննէս Եպս., *Թուղթ Հովուական 1951 Ա. Տարուան Համար*, Պէյրուֆ, Հայ Կաթողիկէ Տպարան, 1948, 16 էջ:

Երգարան Հայերէն Չայնապահաներու, հրատ. Վանիկեան եղբարք, Գ. տիպ, Պէյրուֆ, Տպ. Կ. Տօնիկեան, 1955, 144 էջ:

Ընդարձակ Երգեցողութիւնք Առաւօտեան Եւ Ա. Պատարագի, Բ. Տիպ., խմբ. Կ. Կիլիկեցի, Պէյրուֆ, Տպ. Կ. Տօնիկեան, 1928, 102 էջ:

Թիք Թաք (Օրծաղաշարժ Չաւեշտ Երկու Արար), մատենաշար Սիհուն թիւ 11, Պէյրուֆ, Տպ. Տօնիկեան, ա.թ., 15 էջ:

Թուրշի, Աւգուստ, *Տրովադայի Հրդեհը (Կատակախաղ Մէկ Արար)*, թարգմ. եւ թատերգութեան վերծ. Յ. Յ. Պուճիգանեան, մատենաշար Սիհուն թիւ 1, Պէյրուֆ, Տպ. Տօնիկեան, ա. թ., 25 էջ:

Ժիրայր, Բ., *Մանուկը Բնութեան Մէջ Եւ Գիւղին Թիթեռնիկը*, հրատ. Ազգ. Մահակեան Երկս. Վարժարան թիւ 1, Պէյրուֆ, ա. տ., ա. թ., 16 էջ:

Ժպտունի, Բ., *Մեւ Թէ Ճերմակ (Կատակերգութիւն Մէկ Արար)*, մատենաշար Սիհուն թիւ 17, Պէյրուֆ, Տպ. Տօնիկեան, 1941, 20 էջ:

Կոզեան, Հ. Մահակ, *Մեր Սուրբ Պատարագը. Կիրակի Եւ Տօնի Օրերու Ընթերցումներով*, աշխարհաբար, Պէյրուֆ, 1958, 464 էջ¹⁷:

Հայրապետեան, Տօրթ. Մելքոն, *Զրուցատրութիւն Բնքնուսուցիչ. Հայերէնէ Տրանսերէն Գործնական Խօսակցութեան Պարզ Եւ Դիւրուսոյց Եղանակ*, Պէյրուֆ, Տպ. Տօնիկեան, 1926, 91 էջ:

Հաւատացեալին Երգերը, Բ. տիպ., Պէյրուֆ, Տպ. Տօնիկեան, 1962, 264 էջ:

Մանուկեան Գ., Երամեան Վ., *Դասընթացը Ատաղձագործութեան. Միաւոր Գործողութեանց Հիման Վրայ*, Պէյրուֆ, Տպ. Տէր Յովհաննէսեան, 1927, 20 էջ:

Մելիքեան, Ռոմանոս, *Ես Բլբուլ Եմ (Մեներգ)*, հրատ. Հրանդ Յ. Ապաճեան Գրատուն թիւ 7, Պէյրուֆ, ա. թ., 4 էջ:

Մոլորեալ Ճամբորդը Կամ Զինուորական Օթեան. Օրծաղաշարժ Կատակերգութիւն Մէկ Արարով, մատենաշար Սիհուն թիւ 12, Պէյրուֆ, Տպ. Կ. Տօնիկեան, 1940, 16 էջ:

Նազարենց, Յակոբ Թ., *Արտասահմանեան Հայ Գաղութներու Պատմութիւն, Ա. Հատոր, Հիւսիսային Ամերիկա*, Պէյրութ-Նիւ Եորք, Tankian Publishing Corp., 1968 (տպ. Ատլաս):

Շանթ, Լեւոն, *Մանկական Աշխարհ, Ընթերցարան Հայերէն Լեզուի, Բ. Տարի*, հրատ. Հայ Ճեմարան, Պէյրութ, Տպ. Յոյս, 1943, 112 էջ:

Շանթ, Լեւոն, *Մանկական Աշխարհ, Ընթերցարան Հայերէն Լեզուի, Գ. Տարի*, հրատ. Հայ Ճեմարան, Պէյրութ, Տպ. Յոյս, 1943, 128 էջ:

Շանթ, Լեւոն, *Մանկական Աշխարհ, Ընթերցարան Հայերէն Լեզուի, Դ. Տարի*, հրատ. Հայ Ճեմարան, Պէյրութ, Տպ. Յոյս, 1943, 114 էջ:

Շանթ, Լեւոն, *Հայերէնի Գրաւոր Դասեր, Ա. Տարի*, հրատ. Հայ Ճեմարան, Պէյրութ, Տպ. Յոյս, 1942, 64 էջ:

Շանթ, Լեւոն, *Հայերէնի Գրաւոր Դասեր, Բ. Տարի*, հրատ. Հայ Ճեմարան, Պէյրութ, Տպ. Յոյս, 1945, 64 էջ:

Շանթ, Լեւոն, *Հայերէնի Գրաւոր Դասեր, Գ. Տարի*, հրատ. Հայ Ճեմարան, Պէյրութ, Տպ. Յոյս, 1945, 64 էջ:

Չորպաճեան, Վեր. Տիմոթէոս, *Ծնունդի Պատգամ*, Պէյրութ, ա. տ., 1961, 16 էջ:

Չորս Սալորները (Կատակերգութիւն Մէկ Արար), վերահաւաքեց Ք. Ժպտունի, մատենաշար Սիւնոն թիւ 22, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, ա.թ., 12 էջ:

Պէլոյոյն Երգը, Բաղնիքին Երգը, Քեօնօղլիին Երգը, երաժշտութիւն Ա. Խաչատուրեան, ֆիլմէն գրի առաւ Օ. Քիւրքճեան, դաշն. Է. Մանաս, Պէյրութ, Տպ. Մասիս, 1927, [4 էջ]:

Պզտիկեան, Պ[օղոս] Վ[արդապետ], *Աստուածորդոյ Վերջին Օրերը*, Ձմմառ, Տպ. Ա. Արք. Արփիարեանի, 1927, 108 էջ,

Պօղոսեան, Հ. Եփրեմ, *Անարատ Յղութիւնը Եւ Հայ Եկեղեցին*, Պէյրութ, Տպ. Համազգային, 1969, 32 էջ:

Ճօն Ա. Վիթսօ, *ԲՆԷ Մորմոնականութիւնը*, հրատ. Պ. Փիլանեան, Պէյրութ, Տպ. Ազատ, 1937, 87 էջ:

Քրիստոսի Եւ Եկեղեցւոյ Թշնամիները Եւ Անոնց Վախճանը. Պատմական, Հետաքրքրական Ուսումնասիրութիւն, թարգմ. Հ. Եփրեմ Պօղոսեան, Պէյրութ, ա.տ., 1969, 47 էջ:

Նշմարած ենք 34 կրկնուած գրառումներ, որոնք կատարուած են աշխատանքային հետքին մէջ եւ յետագային չեն գտուած: Չանոնք ցանկագրած ենք առանց մանրամասնելու իւրաքանչիւրի մասին (երբեմն կան էջաթիւերու կամ վերնագրերու տարբերութիւններ, ենն.)¹⁸: Քանի մը այլ կրկնութիւններ արձանագրուած են հեղինակի կամ իմբագրի/կազմողի պակասին պատճառով¹⁹, կամ նոյն հեղինակի իսկական անունով ու գրչանունով առանձին յիշատակումներու

հետեւանքով²⁰։ Մեզի կը թուի, որ 1964ին իբրեւ թէ երկու անգամ հրատարակուած Վարդան Վրդ. Թէքէեանի թարգմանութիւնը՝ «Մարգօ Բոլոյի Ճամբորդութիւնները (1271-1295)» (առաջինը՝ 321 էջ, երկրորդը՝ 303 էջ), կրկնութիւն մըն է նաեւ։

Պէտք է նկատի ունենալ, որ ցուցակը կ'ընդգրկէ 6700 հատոր, մինչ մեր կատարած բոլոր նշումները - զորս չենք յաւակնիր լիակատար ու համապարփակ - համարժէք են, մօտաւորապէս, անոր ծաւալին 5 առ հարիւրին։ Բացայայտ է, որ կազմողները աշխատած են պայմանաժամ մը՝ յարգելու նպատակով, ինչ որ դժուարութիւններու կը մատնէ աշխատողը՝ տուեալներ ստուգելու եւ ճշդելու համբերատար աշխատանքին փոխարէն։ Կարելի էր ակնկալել, որ մատենագիտութիւնը վերլուծական ցուցակներով օժտուէր նաեւ, եւն.։

Այսուհանդերձ, Անդրանիկ Տագեւեանի եւ Արմէն Իւրնէշլեանի կատարած համատեղ աշխատանքը իր անվիճելի օգտակարութիւնը ունի։ Պէտք է մաղթել, որ յետագային գայն կատարելագործելու եւ ամբողջացնելու միջոցներ ստեղծուին²¹, քանի որ լիբանանահայ կազմակերպուած գրադարաններ կան, իսկ աշխարհի չորս ցամաքամասերուն հետզհետէ կազմուող ու համացանցի մէջ դրուող կամ արդէն դրուած հայկական (եւ ոչ-հայկական) գրադարաններու գրացուցակները առիթը կ'ընծայեն յաւելեալ ճշդումի եւ պրպտումի՝ Լիբանան չգտնուող հատորներու։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Հայաստանեան գիրքերու պարագային, անուանաթերթի դարձերեսին զետեղուած *անտաղիայի* սկզբունքին որդեգրումը խորհրդային շրջանին՝ ըստ միջազգային սովորութիւններու, բարիք մըն է գիրքի նկարագրութեան համար։
- ² Թէեւ ըսուած է, թէ միակ բացառութիւնը դասական մատենագիրներն են, պէտք է նշելորոշ անհետեւողականութեան գոյութիւնը։ Կիրարկուած են «Արմէն-Սիւնի», «Գէորգ-Մեսրոպ» (որ գծիկով չէ ստորագրած իր անունը) կամ «Վահէ-Վահեան» մուտքագրումները, օրինակ, երբ միւս կողմէ կը գործածուին «Գարօ, Արմէն» կամ «Վանի, Սօս» ձևերը։ Գրուած է նաեւ «Գարեգին Խաժակ» եւ «Խաժակ, Գարեգին», իսկ նոյն էջին մէջ՝ «Գեղամ-Գեղակ» եւ «Գեղակ-Գեղամ»։
- ³ Այս գիրքին մատնանշումը կը պարտինք ֆրանսահայ գրաքննադատ Գրիգոր Պըլտեանին (բանաւոր հաղորդում, Երեւան, Հոկտեմբեր 2013)։
- ⁴ Պետրոս Աբդ. Մանուէլեան, «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայ Գիրքին Բերած Նպաստը (1932-2012)», էջ 16 (տե՛ս www.scribd.com/doc/138657572/The-Contribution-of-the-Armenian-Catholicosate-of-Cilicia-Towards-the-Armenian-Book)։
- ⁵ Ի դէպ, Գրական Մրցանակի հրատարակութիւններու ցանկը Զարեանի (թիւ 10) եւ Արմանտի գործերը (թիւ 11) նշած է 1974 թուագրութեամբ (տե՛ս՝ Վարդան

- Մատթեոսեան, *Գրական-Բանասիրական Ուսումնասիրություններ*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2009, էջ 661), որ ճիշդ չէ:
- ⁶ Եղեռնէն վերապրողներու նամակներ խմբող *Հայն Տարապետեան* կազմողը Պետրոս (ոչ թէ Պօղոս) Տօնապետեանն է (էջ 401), իսկ *Ես Յանցանք Գործեցի* վեպին հեղինակը Հայ (ոչ թէ Հայկ) Սանինեանն է (էջ 337), որ նոյնական է Սուրեն Սանինեանի հետ: Ֆրանսահայ բանասէր Յակոբ-Գրիգորի մականունը ճշտեան չէ (էջ 258), այլ՝ ճոճեան: Միւս կողմէ, Տիգրան Սարաֆեան, *Հայ Մարմնակրթական Միութեան Պատմութեան Հետքերով...* հատորը խմբագրած ու հրատարակած է Ժիրայր Նայիրին (էջ 341):
- ⁷ Սեպուհ Ակունի եւ Արամ Անտոնեան երկու տարբեր անձեր են (էջ 24): Ներսէս Լամբրոնացիի *Մեկնություն Բնաստություն Սողոմոնին* աշխարհաբարի վերածող Անուշավարդը նոյնական է Ներսէս Ենտրիակիի «Թուրթ Ընդհանրական»ը աշխարհաբարի վերածող Անուշաւան Վրդ. Դանիելեանի հետ (էջ 273):
- ⁸ Ակիւլինէ Թաթուլեանի գիրքը կը կոչուի *Յուշեր Դիցագնական Կեանքէ Մը (1915-1920)* եւ 53 էջ ունի, *Գեորգ Չաւուշի Մահուան 60-Ամեակին Առթիւ* գրքոյկը փակագիծերու մէջ պետք է ունենայ 1907-1967 թուականները, Սեդրակ Շահինի գիրքը կը կոչուի *Քեռի Թորոսը* եւ ոչ թէ *Քար Թորոսը: Բարեկենդանի Անկուտիները* թատերախաղը, գրաշարական վրիպակով, դարձած է *Բարեկենդանի Անկուտները*:
- ⁹ *Հոսիսի Տարեգիրքը* (Ա. Տարի 1929) տպուած է 1928ին եւ ոչ թէ 1929ին (էջ 218), Մարտիրոս Գուշակճեանի եւ Վեր. Տիգրան Խնդրունիի *Անգլերէն-Հայերէն Արդի Բառարանի* Բ. տպագրութիւնը եղած է 1976ին եւ ոչ թէ 1975ին (էջ 85): Քանի մը պարագաներ վերագրելի են գրաշարական վրիպակներու (Ջահրատի *Մէկ Քարով Երկու Գարունը* վերատպուած է 1997ին (էջ 108), Անդրանիկ Զէյթունեանի աշխատասիրած *Գիրք Ղևտացուցը* հրատարակուած է 1993ին (էջ 81), Պէպօ Սիմոնեանի *Խորհրդածություններ Հայաստանի Գրողներու Հինգերորդ Համագումարի Սեմինը* տպուած է 1966ին (էջ 355)): Անթուակիբ գործեր ալ կարելի է թուագրել, ինչպէս Գեորգ Ջահուկեանի *Հայոց Լեզուի Տեսութեան Եւ Պատմութեան Հիմնահարցերը* (էջ 331)՝ 2000ին լոյս տեսած:
- ¹⁰ Արշալիր Շիրակեանի *Կտակն Էր Նահատակներուն* գործին Բ. (եւ ոչ թէ Գ.) տպագրութիւնը կատարուած է 1986ին (էջ 294):
- ¹¹ *Անմիջական Գրականութիւն* ժողովածուն (1971) Գրական Խմբակի հրատարակութիւնն էր, ոչ թէ Պօղոս Սնապեանի (էջ 362): *Սոցիալ Հնչակեան Դեմոկրատ Գուսակցութեան Մամուլը (1887-1987)* գրքոյկը աշխատասիրած է Արտաշէս Տէր Խաչատուրեանը (էջ 364):
- ¹² Արամ Վրդ. Քէշիշեանի (այժմ Արամ Ա. Կաթողիկոս) *Հայ Եկեղեցւոյ Ճշմարիտ Դիմագիծը* գործին (էջ 423) հրատարակութեան վայրը՝ Պէյրութ է:
- ¹³ Բարգէն Վրդ. Թօփճեանի *Լիբանանի Հնայնական Վայրերը* (էջ 137)՝ Անի Մշակութային Միութիւն, *Մէրի Ճօնի Եւ Իր Ս. Գրքին Պատմութիւնը* (էջ 247)՝ Բրիտանական եւ Օտարագգի Ա. Գրոց Ընկերակցութիւն, Վլադիմիր Պետրոսեանի *Արարատը Պէտք Է Մնայ Երեւանի Կողմը* (էջ 320)՝ Ռ. Սեւակ

Մշակութային Հիմնարկի, Գրիգոր Դ. Վահանեանի *Օտարը* (էջ 369)՝ «հրատ. Վ. Ուզունեան գրատան թիւ 5»:

- ¹⁴ Ուիլելմ Ու. Օրրի *Երիտասարդաց Յատուկ Նիւթեր Եւ Աստուծոյ Պատասխանը* հատորը (էջ 438) թարգմանուած է Ս. Յ. Փաշկեանի կողմէ:
- ¹⁵ Գարեգին Նժդեհի *Ազատ Միւնիքի* 1999ի հրատարակութիւնը խմբագրած է Կարօ Յովհաննէսեան եւ 176 էջ ունի, Վարդան Մատթէոսեանի *Հարաւային Կողմն Աշխարհի* հատորը խմբագրած է Զաւէն Մարրլեանը, իսկ *Գրական-Բանասիրական Ուսումնասիրութիւնները*՝ Արմենակ Եղիայեանը:
- ¹⁶ Վահրամ Արծրունիի *Հայ Դպրոցը 1830ին, 1870ին եւ 1920ին* թատերախաղը 75 էջ ունի (էջ 56), *Գանոնագիր Ազգ. Սահակեան Վարժարանին* 233 էջ չունի (էջ 168), այլ 23, Տէրէքթիվի *Էնվեր, Թալէաթ, Ճեւալ Եւ Շէրլօք Հօլմս* (էջ 388) 317 էջ ունի եւ Գարեգին Բ. Կաթողիկոսի, *Հայրական Խօսք Ամերիկեան Արեւմտեան Թեմի Հաւատացեալ Ժողովուրդին* (ոչ թէ *Ժողովրդեան*) 39 էջ ունի, ոչ թէ 56 + 40 (էջ 343):
- ¹⁷ Մէսրոպ Հայունի, *Գերապաճառ Դոկտ. Հայր Սահակ Եպիսկոպոս Կոզեան*, Այնճաք, Imprimerie Moderne Kreim, 2008, էջ 674:
- ¹⁸ Շուշանիկ Աբոյեան, *Ռոպերթ Անդրէասեանը Դաշնակահար եւ Մանկավարժ* (էջ 13 եւ 62), Նիկոլ Աղբալեան, *Ամբողջական Երկեր, Ա. Հտր.* (էջ 27 եւ 29), Պ. Պ. Աճեմեան, *Զրուցատրութիւն Հայերէն-Անգլերէն* (էջ 34 եւ 112), Արշի, *Գանաչ Արտեր* (երկիցս, էջ 58), *Ամերիկեան Դեսպան Սր. Մորկընթաուի Յիշատակները Եւ Հայկական Եղեռնին Գաղտնիքները* (էջ 34 եւ 254), Ազատ Աւարայր, *Լեղի Բաժակներ Եւ Վայրկեաններ* (էջ 60 եւ 213), Ա.Ո. *Խանասորի Արշաւախումբը եւ Հրայր Դժոխք* (էջ 61 եւ 135), Յակոբ Բամպակեան, *Յաւերժական Բաժակը*, 2001 (էջ 64, երկիցս), Մինաս Գանգրունի, *Գուսան Երգարան* (էջ 72 եւ 85), Թովմաս Գեմբացի, *Նմանութիւն Քրիստոսի* (էջ 77 եւ 276), Մարօ Գրվրեան-Նիկողոսեան, *Ապրելու Արուեստը III* (էջ 80 եւ 276), Թորգոմ Պատր. Գուշակեան, *Սուրբք Եւ Տօնք* (էջ 85, երկիցս), Գրիգոր Նարեկացի, *Նարեկ Աղօթամտեան* (էջ 89, երկիցս), *Դիւան Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի* (էջ 96 եւ 391), Արսէն Երկաթ, *Եգիպտականք* (էջ 106 եւ 107, վերջինս ասելի ամբողջական է): Խրիմեան Հայրիկ, *Երկեր* (էջ 158 եւ 159. վերջինս ճիշդ տարեթիւը ունի՝ 1989), Կէօթէ, Եոհան Վոլֆկանկ, *Հինգ Թատրերգութիւն եւ Ֆաուսթ* (էջ 80 եւ 171), Միսաք Թողլաքեան, *Օրերուս Հետ* (էջ 129 եւ 132), Յարութիւն Իսկահատեան, *Վկայարան Հայկական Տեղասպանութեան, Ա. Հտր.* (էջ 146, երկիցս), Օմար Խայեամ, *Քառեակներ* (էջ 154 եւ 429), Գրիգոր Կէօվշէնեան (իմա՝ Գրիգոր Շէնեան), *Ապահովագրութեան Պայմանները Եւ Օգուտները* (էջ 43 եւ 171), *Կեանք Սը Նուիրում* (էջ 170 եւ 365), Վարդիթեր Կոճոլոզեան-Յովհաննէսեան, *Չիթող Դաշտի Կարնոյ* (էջ 180 եւ 264), Պետրոս Օ. Վրդ. Կոստանդինեան, *Մաթոսաղայի Հարցումները Թիւ 1* (էջ 181 եւ 182), *Համամարդկային Երագահան* (էջ 105 եւ 191), *Հայ Լեզու, Ա. Տարի* (էջ 115 եւ 194), *Հայ Լեզուն՝ Արհիւր Յաւերժութեան* (էջ 175 եւ 195), *Հայ Լեզուն, Գ. Գիրք* (էջ 195 եւ 320), *Հայկական Հարցը Խաղաղութեան Ժողովին Առջեւ* (էջ 202, երկիցս), Յովհաննէս Ճէտիտեան, *Հատրնտիր Պատմութիւններ, Բ. Հտր.* (211 եւ 226), *Մայրերգ* (էջ 232 եւ 326), *Մարգոյ Բոլոյի Ճամբորդութիւնները* (1271-1291)

(էջ 239, երկիցս), *Մուսա Լերան Ժողովրդական Հեքեաթներ*. Առասպելական Հեքեաթներ (էջ 44 եւ 255), Յարութիւն Ս. Նաշալեան, *Հայկական Եւ Օտար Բարոյական Զուարճայիներ* (էջ 272, երկիցս), *Յակոբ Օշական – Վահան Թեքեան* (էջ 257 եւ 432), Ա. Նազգաշեան, *Այաշի Բանտը* եւ *Մուսթաֆա Նետիմ, Հայ Եղեռնը* (էջ 268 եւ 273), Մեսրոպ Նուպարեան, *Գրպանի Բառարան Ֆրանսերէնէ Հայերէն* (էջ 278՝ երկիցս), Յ. Յ. Չագմագճեան *Բացատրական Բառարան Անգլերէնէ Հայերէն* (էջ 300 եւ 301), Արմէն Սիւնի, *Գարմիր Կանաչ* (էջ 57 եւ 360), *Վահան Թեքեանէն Մամուլի Մէջ Տպուած Եւ Անտիպ Երկեր Ու Նամակներ* (էջ 232 եւ 369), Արտաշէս Տէր Խաչատուրեան, *Հայ Մամուլի Յուցահանդէս* (էջ 195 եւ 391), Արտաշէս Տէր Խաչատուրեան, *Հայ Մշակութային Եղեռնը* (էջ 195 եւ 391), Տոմարծացի Յովհաննէս Ա. Սարկաւազ, *Պատմութիւն Հայ Տոմարծայի* (էջ 134-135 եւ 399), Մեվլան Զատէ Բիֆաթ, *Օսմանեան Յեղափոխութեան Մութ Օալքերը*, 1938 (էջ 404, երկիցս), Մելքոն Քրիշշեան, *Խորտակուած Քնար, Անմար Կանթեղ* (էջ 424 եւ 426):

¹⁹ Հմմտ. Մկրտիչ Վրդ. Աւգերեան, *Առձեռն Բառարան Հայկագնեան Լեզուի* (էջ 60), այլուր՝ *Առձեռն Բառարան Հայկագնեան Լեզուի* անունին տակ (սխալ թուագրումով՝ 1998, հաւանաբար՝ գրաշարական վրիպակ մը) (էջ 44), *Հագար Ու Մէկ Բար Ու Բան Հայոց Իսուից Բարբառէն* (էջ 189), այլուր՝ Տիրայր Ֆրունճեանի անունին տակ (էջ 440), *Հայասպանութիւնը Եւ Ամերիկեան Քոնկրէսը* (էջ 196), այլուր՝ Շաւարշ Թորիկեանի անունին տակ (էջ 132), Գարեգին Վրդ. Պեքճեան, *Գիրք Անձնանուններու* (էջ 320), այլուր՝ *Գիրք Անձնանուններու* խորագրին տակ (էջ 81):

²⁰ Հմմտ. Սօսեաց Տղան, *Աքսորականի Մը Յուշերէն* (էջ 368), որ այլուր ցուցակագրուած է բուն հեղինակի՝ Կարօ Մեհեանի անունին տակ (էջ 246):

²¹ Այդ թարմացումի աշխատանքին լաւագոյն միջոցը կրնձայէ մատենագիտութեան ամբողջական բնագրին տեղադրումը համացանցի մէջ (հասցէ՝ www.haigazian.edu.lb/ADRC/Documents/Bibliography.pdf):

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1@yahoo.com